ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

<--19--> հոկտեմբերի 2015թ.

ՈՐՈՇՈՒՄ No. 1238 /02

Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին

ՀՀ Ֆինանսների Նախարարության իրավաբանական վարչության պետ Ա. Գաբրիելյանս քննարկելով Արարատ Բարսեղյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

16.10.2015թ-ի դրությամբ Արարատ Բարսեղյանի /ՀՎՀՀ 37468744, հասցեն ք. Երևան Մոլդովական 17/ չկատարված հարկային պարտավորությունները ԱԱՀ-ի գծով կազմում է՝ 2.108.375 դրամ, որից ապառք՝ 1.351.090 դրամ, տույժ՝ 419.512 դրամ, տուգանք՝ 337.773 դրամ, որն առաջացել է 2015թ. մարտ ամսվա ԵՏՄ-ի հաշվարկով և նախորդ հաշվարկներով առաջացած հարկերը սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով, որոնք ենթակա են գանձման :

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր և տուգանքներ :

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 29[1] հոդվածով, <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Արարատ Բարսեղյանից գանձել 2.108.375 դրամ պարտավորության գումար:
2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն՝ կցելով նաև սույն ակտն անբողոքարկելի դառնալու օրվա դրությամբ գանձման ենթակա առկա չվճարված հարկային պարտավորությունների գումարի հաշվարկը /ներառյալ հարկային օրենսդրությամբ հաշվարկված տույժերի և տուգանքների գումարները/ :
3. Որոշման օրինակն եռօրյա ժամկետում ուղարկել /ֆիզ. անձին կամ/ հարկ վճարողին :
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից :
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին, կամ վերադաս վարչական մարմին՝ <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ Վարչական դատարան :

Առդիր մնացորդների վերաբերյալ տեղեկանքը :

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

Ստացա որոշման օրինակը

Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ. Անձի անուն ազգանուն ամսաթիվ

Կատ. Առաջատար մասնագետ
Անի Ենոքյան հեռ. 060 54-42-78